- 12:59 | Աշխարհում Ռուսաստանը հերթական հումանիտար օգնությունն է ուղարկել Դոնբաս

  Այս մասին հայտնել է ՌԴ ԱԻՆ ներկայացուցիչը:
  Աղբյուր՝ BBC Russian

- 12:40 | Հայաստան Փաստաբանը հայտարարել է, որ Ֆլորա Մարտիրոսյանի որդին մեքենայի ղեկին չի եղել

  21-ամյա Հենրի Գևորգյանը, որը չհերքված տեղեկությունների համաձայն հայտնի երգչուհի Ֆլորա Մարտիրոսյանի որդին է, մեղադրվում է երկու անձի սպանության համար:
  Աղբյուր՝ Panorama.am

- 12:33 | Տարածաշրջան Թուրքիայի դատարանը էրդողանին տուգանել է հայ-թուրքական հաշտեցման հուշարձանը «հրեշավոր» անվանելու համար

  էրդողանը Մեհմեդ Ակսոյի հեղինակած «Մարդկության հուշարձանի» նկատմամբ վատ վերաբերմունքը հայտնել էր 2011 թվականին:
  Աղբյուր՝ Panorama.am

- 12:25 | Աշխարհում Սիրիայում ԻԼԻՊ-ի դեմ պայքարի շրջանակներում բրիտանացի նախկին ծովային հետևակ է սպանվել

  Քամիշլի քաղաքում մարտերը շարունակվում են:
  Աղբյուր՝ BBC

- 12:09 | Աշխարհում Ձերբակալվել է Խարկովի քաղաքապետը

  Պաշտոնյան մեղադրվել է խուլիգանության մեջ:
  Աղբյուր՝ Rosbalt.ru

Օրվա բոլոր կարճ լուրերը

15:37 19/06/2012 » Քաղաքական

Մ. Հովհաննիսյան. Արցախի վերաբերյալ

համացանցում գերազանցում են հայկական ռեսուրսները

«Երբ օտար մարդը լսում է ԼՂ հակամարտության, այս կամ այն միջադեպի մասին, նա փորձում է գտնել այդ խնդրի արմատները և այդ արմատներին ծանոթանալու համար նա փնտրում է այնպիսի ռեսուրս, որտեղ խնդիրը ներկայացված է գիտական կամ գիտահանրամատչելի ձևով»,- այսօր անդրադառնալով համացանցային տիրույթում իրականացվող քարոզչությանը, լրագրողների հետ զրույցում ասաց ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական քարտուղար, Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու Միեր Հովհաննիսյանը:

Այնուհետև, անդրադառնալով հայ-ադրբեջանական համացանցային մրցավազքին բանախոսը նշեց. «Համացանցի փնտրող համակարգերում «Ղարաբաղ» կամ «Ղարաբաղյան հակամարտություն» արտահայտությունները փնտրելով, եթե 4-5 տարի առաջ մենք կտեսնեինք, որ բավականին մեծ թվով ադրբեջանական ռեսուրսներ են ի հայտ գալիս, ապա այսօր վստահորեն պետք է նշել, որ գերազանցում են հայկական ռեսուրսները ոչ միայն հայկական ինտերնետային տիրույթում, այլև առհասարակ համացանցի տարբեր տիրույթներում»:

Մ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ վերջին 5 ամիսների ընթացքում կենտրոնը ստեղծել է 8 համացանցային կայքեր, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանության, հայոց սփյուռքի, հայոց պատմության, հայ մշակույթի, հնագիտության, կրոնի, լեզվի խնդիրներին և արցախյան հակամարտությանը:

Նա այսպիսի ռեսուրսների ստեղծման անհրաժեշտությունը բացատրում է նրանով, որ դրանք պետք է դառնան համացանցում ցանկացած կայքի և օգտատերի համար ինֆորմացիոն աղբյուր:

Խոսելով Ադրբեջանի ծավալած հակահայկական քարոզչության մասին՝ նա նշեց, որ ադրբեջանական՝ առաջին հայացքից լուրջ թվացող ու լուրջ գրականության ցանկ ունեցող աշխատանքները հիմնվում են ոչ իրական փաստերի վրա: Հեղինակները վերցնում են որևէ աղբյուրից մի հատված, որի միջոցով, այն կտրելով համատեքստից, արտացոլում են այլ պատկեր:

Աղբյուր՝ Panorama.am

Ամենից շատ կարդացված նյութեր

- 23:02 • 04/03
  Նախագահը ներկա է գտնվել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի «Հայկյան» մրցանակաբաշխությանը
- 09:16 • 05/03